## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «21» օգոստոսի 2023թ.

ժամը 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Խաչատրյան /նախագահ/,

Բացող անդամներ՝ Յու.Մուշեղյան, Ջ.Բազեյան

Գնահատող անդամներ Ա.Մելքոնյան, Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Ա.Բաղեյան

ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին.

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Արթուր Բաղեյանը հայտնեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 1 /մեկ/ մասնակից՝

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վերին Գետաշեն, Ա թաղամաս,5-րդ փողոց,տուն 3, bulgarollc@yandex.ru |

1. Ուսումնասիրելով ՀՀ ԳՄ ԳՀԽԾՁԲ-2023/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց՝ որ բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիան, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երկու տարվա ընթացքում վերոնշյալ լիցենզիայի ներքո պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր, մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը հանձնաժողովը **որոշեց՝**

1) Կասեցնել նիստը 1 /մեկ/ աշխատանքային օրով՝ «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

2) Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ս/թ օգոստոսի 24-ին ժամը 17:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ | | |
|---|---|---|
| նախագահ՝ | | Գ.Խաչատրյան |
| անդամներ՝ | | Յու.Մուշեղյան |
| | | Ա.Մելքոնյան |
| | | Գ.Մելքոնյան |
| քարտուղար՝ | | Ա.Բաղեյան |